և ջերմութիւն տապին արևուն և նուազութեան կերակրոց, և տկարութիւնն անդամոց և այլն, նաև որ բազմաց 'ի միջի մերոց պանդխտելոց պատահեցաւ որ ոչ գտաւ տեղի դամբարանի հանդուցանել դի ննջեցելոյն իւրոյ 'ի տարբ աշխարհի, այսքան դան մեք արբեցաք 'ի պատճառէ գիտելով հնարն պահելոյ ազատութեան մեր և ոչ պահեցաք, և ամենայն անկարգութեամբ գործ և արարք մեր մեզ սովորութիւն արարաք, և 'ի բերանէ մերմէ մեք մեզ դատապարտելով ասացաք թէ այս ամենայն որ եկն 'ի վերայ մեր վասն մեղաց մերոց, իրաւի ամենայն պակասութիւն մեր և նեղութիւն, անտէրութիւն, թշուառութիւն, պանդխտութիւն, գերութիւն, աղքատութիւն և այլն բոլորն դայ 'ի պատճառէ մեղաց մերոց, այլ պարտ է մեզ ճանաչել թէ որ մեղք ոչ ըստ կարծեաց այժմոյս մերոյ որում համարիմք ծայրագոյն մեղք՝ այսինքն քաղցեալն կերաւ և յագեցաւ, մերկն զգեցաւ, գեղեցիկն սիրեցաւ և այլն, որ ամենայն բնութիւն մարդոյ ոչ ոք կարէ զսպել անձինս իւր 'ի այսպիսի բնական մեղաց ոչ ուտող և ոչ զգենօղն և ամուսնացեալն կարի զրկիլ 'ի բարութենէ Տեառն, և կորուսանել պատիւս ազատութեան իւրոյ, թէ ոչ ծայրագոյն գերիվեր քան զամենայն մեղք մեր է ծուլութիւնն որ սովաւ գոյանայ ամենայն մահկանացու մեղք որ ոչ ջա-